

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՔՆՆՈՂ ԱԶՔԸ**

Քննող աչքդ սուր կը նայի ինձ,
Եւ ես շուարած չեմ հասկնար՝
Քարացած կը սպասեմ խօսքիդ,
Որ ուղղեմ քայլերս դէպի հոն:

Քննող աչքդ սուր կը նայի ինձ.
Կը թափանցէ խորքը հոգիիս՝
Յայտնաբերելու գաղտնիք մը,
Պահուած այնտեղ գաղտնորէն:

Քննող աչքդ սուր կը նայի ինձ,
Մի՞թէ մեղք եմ գործեր մահացու,
Խիստ արժանի դատաստանիդ,
Վերջակէտը դնելու մեղաւորիս:

Քննող աչքդ սուր կը նայի ինձ,
Կարծես ըլլամ ես յանցապարտ՝
Արժանի յաւէտ կալանաւորման,
Մինչեւ կատարեմ խոստումս իմ:

Քննող աչքդ սուր կը նայի ինձ,
Մի՞թէ վատներ եմ ես քո ինչք

Եւ կամ ունի՞մ դեռ տալիք քեզ,
Որ կը հալածես նայուածքովդ:

Քննող աչքդ սուր կը նայի ինձ,
Եւ ես անմեղօրէն շփոթած
Կը յառեմ նայուածքս գետին,
Մեղմելու շփոթանքը հոգիիս:


Աչքս դեռ քարացած դէպ գետին,
Աչքն այն պատկերին Աստուծոյ
Քաշեց զիս իրեն՝ նման մագնիսի,
Ու փշաքաղուեց մարմինս համակ:

Պատկերն այն՝ աչքն Աստուծոյ
Տարիներ կախուած էր պատին
Ու ես չէի զգացած զօրութիւնը
Եւ զեղուն անմեղութիւնը անոր:

Այդպէս է Աստուած Իր աչքով,
Եւս եւ համակ պահպանութիւն,
Սիրոյ կողմնացոյց՝ փնտռողին,
Միշտ հետեւող զինք ճանչցողին:

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԴ.

(Նոյեմբեր, 2018)



ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՏԱՃԱՐՆ ԱՍՏՈՒԾՈՅ**

Հնամեայ քաղաքն Երուսաղէմ,
 Խոստացեալ Երկիրն Աւետեաց,
 Կաթ եւ մեղր սնուցող քաղաք,
 Պատկերը վերին Երուսաղէմի:

Հնտրեալ հողն աստուածային,
 Սրբացաւ արեամբն Յիսուսի,
 Եղաւ ժառանգ Հայոց ազգին՝
 Կեանքի գնով հետեւողին:

Աստուածառաք Բանն Աստուած
 Նման ձիթենիին Նահապետեան,
 Խաղաղասէրն էր գուշակուած՝
 Ժշմարիտ յոյսը մարդկութեան:

Ան օրնիրուն քրտնաթաթախ
 Հերկեց երկիրն այս աւազուտ,
 Յանեց սերմը խաղաղութեան,
 Որ մարդ ուսանի եղբայրանալ:

Սիրոյ լուծն թեթեւ՝ կրած ուսին,
 Տուաւ զայն առաքեալներուն,
 Որ հերկեն սրտերն ամայացած՝
 Բերքաւորելու մէկի տեղ հարիւր:

Խօսքերն Անոր՝ լերան գագաթին,
 Եղան խորքը իր քարոզչութեան

Ու նեցուկ՝ տկար մարդկութեան,
 Վեր պահելու պատկերն Արարչին:

Առատահոս Հոգւով աստուածային
 Բեղմնաւորեց Իր Սուրբ Եկեղեցին,
 Ծնանելու լոյսի որդիներ մնայուն՝
 Արդար բնակիչները Իր Հօր տան:

Թաղէ ու Բարթող առաքեալներ
 Գծեցին ուղին կարմիր արեամբ,
 Հիմնելու Տունը մեր Միրածնաէջ՝
 Քաւարանը հոգիի փրկութեան:

Եկեղեցին նման Նոյան Տապանի
 Կը ծփայ կայուն հովերու դիմաց,
 Կը պահէ ընտրողին՝ անսասան,
 Տանելու զինք Տիրոջ արքայարան:

Լուսատու հզօր խաչն ի գմբէթ
 Եկեղեցին փարոսն է փրկութեան՝
 Մեղքի ջուրերուն դէմ լուղորդին,
 Որ կը մօտենայ յոգնած՝ զղջացած:

«Հայր մեր»-ն է որ կը ձայնէ այնտեղ,
 Կը հայցուի Հօր կամքը սուրբ,
 Կը ճաշակուի Հաղորդն Սուրբ՝
 Ստանալու մաքրութիւնը հոգիի:

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԴ.

(Հոկտեմբեր, 2020)

ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՔԱՐԵՐ ՍԻՈՆԻ**

Քարերն անձայն դարեր անց
Ժպտերես յակինթ դեղնորակ
Կը պատանքեն տուն ու բակ
Սրբավայր մեր Յակոբեանց:

Քարերն անձայն դարեր անց
Այրած արեւէն սուրբ Սիոնի,
Օծուն երկնային շաղ ցօղով,
Կը շնչեն օդն այն խնկաբոյր:

Քարերն անձայն դարեր անց
Կը քսուին քայլերուն հպած
Ճանչնալու մնայուն յաւէտ
Վանականն իրենց միաբան:

Քարերն անձայն դարեր անց
Ի լուր կոչնակին լուսադէմ,
Կ'արթնան հետն ժամասացի
Մերթ ժպտուն, մերթ տխուր:

Քարերն անձայն դարեր անց
Ամրահիմքը ծոցը բնութեան,

Լռակեաց վկաները կեանքին,
Անքակտելի են խորհուրդով:

Քարերն անձայն դարեր անց
Խոհուն ու միշտ ծանրակիր
Պահած ունին խորքն իրենց
Աննենգ զրոյցը պատմութեան:

Քարերն անձայն դարեր անց
Քար լռութեամբ կը տոկան
Անխիղճ մարդուն արարքին
Յայտնելու զայն օրն վերջին:

Քարերն անձայն դարեր անց
Յոյսը վաղուան ամրութեան
Կը մնան հետն այս կեանքին
Փառքովն իրենց ստեղծողին:

Ո՛վ երջանկաւէտ հայ ժառանգ
Պահէ՛ ու սիրէ՛ քարերդ Սիոնի
Թէկուզ վաղեմի ու լռակեաց
Զի կտակն են քո ի վերուստ:

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎՐԴ.

(Հոկտեմբեր, 2021)

